# «ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»-Ը ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

Ներսես Շնորհալու ամենից շատ տարածված ու սիրված ստեղծագործություններից մեկն է «Հաւատով խոստովանիմ» հանրահայտ աղոթքը:

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի բարերար ազդեցությամբ և բանաստեղծական մեծ շնչով գրված մի գործ է սա, որ բաղկացած է օրվա քսանչորս ժամերին համապատասխան տներից:

Աղոթքի մեջ տեսնում ենք երկինքն ի վեր խոսող բանաստեղծին, լսում նրա սրտից բխած զղջական, աղերսական ու խոստովանական հուզաթաթավ խոսքերը:

Ինչպես Նարեկացու «Մատեան»-ը, այնպես էլ այս աղոթքը գրվել է արձակ, բայց նրա մեջ առկա է ապրումների ու հույզերի մի այնպիսի խտացվածք, որը գրվածքը վեր է ածում ներքին ռիթմով օժտված ազատ բանաստեղծության: Հիրավի, մենք գործ ունենք մի բարձրորակ քերթվածի հետ, որը մինչև օրս պահպանել է իր հնչեղությունը, հուզականությունն ու ազդեցության ուժը:

«Հաւատով խոստովանիմ»-ն իր բարձր արժանիքների շնորհիվ առանձին ուշադրության է արժանացել, բազմաթիվ անգամ հրատարակվել և թարգմանվել է տասնյակ լեզուներով:

Աղոթքն առաջին անգամ լույս է տեսել 1616 թվականին Լվովում «Սաղմոս ի Դաւիթ» գրքում, ապա՝ 1661-ին Ամստերդամում «Կարճառոտ ժամագիրք» ժողովածուի մեջ: Սակայն առանձին գրքով այն առաջին անգամ հրատարակվել է Վենետիկում 1690 թվականին: Դրանից հետո տարբեր քաղաքներում եղել են մի շարք այլ հրատարակություններ: Ընդ որում, 1780 թվականի լոնդոնյան հրատարակությունից հետո «Հաւատով խոստովանիմ»-ը վերստին լույս է տեսնում, այս անգամ հայերեն, լատիներեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով, իսկ 1788 թվականին Պետերբուրգում՝ նաև ռուսերեն:

1823 և ապա 1837 թվականին Վենետիկում աղոթքը լույս է տեսնում քսանչորս լեզուներով: Տեքստի բազմալեզվյա հրատարակություն է կատարում նաև Լազարյան ճեմարանը 1830 թվականին:

Ամենանշանավորը, սակայն, 1862 թվականի վենետիկյան հրատարակությունն է, որտեղ «Հաւատով խոստովանիմ»-ը կարելի է կարդալ երեսունվեց լեզուներով:

Բազմիցս միջազգային ասպարեզ դուրս եկած այս հոչակավոր ստեղծագործությունը ավելորդ չենք համարել փոխադրել նաև գրական արևելահայերենի: Ներկայացվող փոխադրությունը կատարել ենք 1862 թվականի հրատարակությունից, աշխատել ենք հարազատ մնալ բնագրին, տողատել ենք այն և պահպանել համաչափությունը:

1

Հաւատով խոստովանվում և երկրպագում եմ քեզ,
Հայր և Որդի և Սուրբ Հոգի,
անեղ և անմահ բնություն.
Արարիչ հրեշտակների և մարդկանց և բոլոր եղածների,
ողորմի՛ր քո արարածներին:

2

Հավատով խոստովանվում և երկրպագում եմ քեզ,
անբաժանելի լույս՝ միասնական Սուրբ Երրորդություն
և մի Աստվածություն՝
արարիչ լույսի և հալածիչ խավարի.
հալածի՛ր իմ հոգուց խավարը մեղքերի և անգիտության.
և լուսավորի՛ր միտքն իմ այս ժամին՝
որ աղոթեմ ի հաճույս քեզ.
և ընդունեմ քեզնից խնդրանքները իմ.
և ողորմի՛ր ինձ՝ բազմամեղիս:

3

Հա՛յր երկնավոր՝ Աստվա՛ծ ճշմարիտ,
որ առաքեցիր քո սիրելի Որդուն
փնտրելու մոլորված ոչխարին,
մեղանչեցի ես երկնքի և քո դեմ,
ընդունի՛ր ինձ ինչպես անառակ որդուն,
և հագցրո՛ւ ինձ պատմուճանը նախկին,
որից մերկացա մեղքով,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

4

Որդի՛ Աստծո, Աստվա՛ծ ճշմարիտ,
որ խոնարհվեցիր հայրական ծոցից
և մարմին առար սուրբ Կույս Մարիամից՝
մեր փրկության համար.
խաչվեցիր և թաղվեցիր
և հարություն առար մեռյալներից.
և համբարձվեցիր առ Հայրը,
մեղանչեցի ես երկնքի և քո դեմ,
հիշի՛ր ինձ ինչպես ավազակին,
երբ գաս քո արքայությամբ,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Հոգի՛ Աստծո, Աստվա՛ծ ճշմարիտ,
որ իջար Հորդանան և վերնատանը.
և լուսավորեցիր ինձ մկրտությամբ սուրբ Ավազանի.
մեղանչեցի ես երկնքի և քո դեմ,
մաքրի՛ր ինձ վերստին աստվածային հրով քո.
ինչպես [մաքրեցիր] առաքյալներին հրեղեն լեզվով,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

6

Անե՛ղ բնություն,
մեղանչեցի քո դեմ ես իմ մտքերով,
հոգով և մարմնով իմ.
մի՛ հիշիր մեղքերն իմ առաջին՝
քո սուրբ անվան համար,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

7

Ամեն ինչ Տեսնո՛ղ,
մեղանչեցի քո դեմ ես իմ խոհերով,
խոսքով և գործով.
ջնջի՛ր ձեռագիրն իմ հանցանքների
և անունն իմ գրիր կենաց գրքի մեջ,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

8

Գաղտնիքներ Քննո՛ղ,
մեղանչեցի քո դեմ կամա և ակամա,
գիտակցաբար և անգիտակցաբար.
թողությո՛ւն շնորհիր մեղավորիս,
քանզի ծնունդից [սուրբ] Ավազանի մինչև այս օրս
մեղանչել եմ քո Աստվածության դեմ
զգայարաններով
և անդամներով բոլոր՝ իմ մարմնի.
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

9

Ամենախնամ Տե՛ր,
քո սուրբ երկյուղը պահապան դիր աչքիս,
որ էլ չնայի արատավոր բաներ,
և ականջներիս՝ որ չախորժեն լսել չարության խոսքեր
և բերանիս՝ որ սուտ չխոսի
և սրտիս՝ որ չար չխորհի
և ձեռքերիս՝ որ չգործեն անիրավություն
և ոտքերիս՝ որ չգնան ճամփով անօրինության.
ուղղի՛ր ընթացքը սրանց,
որ միշտ համաձայն լինի քո բոլոր պատվիրաններին,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

10

Հո՛ւր կենդանի՝ Քրիստո՛ս,
քո սիրո հուրը, որ նետեցիր երկիր
բորբոքի՛ր իմ մեջ,
որ այրի աղտը իմ հոգու.
և սրբի խղճմտանքը իմ
և մաքրի մեղքերն իմ մարմնի
և վառի քո գիտության լույսը իմ սրտում,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

11

Հոր իմաստություն՝ Հիսո՛ւս,
տո՛ւր ինձ իմաստություն, որ ամեն ժամ քո դեմ
խորհեմ և խոսեմ և գործեմ բարին

և չար խոհերից, խոսքից, գործերից
փրկիր ինձ,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝
բազմամեղիս:

12

Բարին կամեցո՛ղ, Տե՛ր կամարար,
մի՛ թող որ անձիս կամքով շարժվեմ,
այլ առաջնորդի՛ր,
որ միշտ բարեսեր կամքովդ լինեմ,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝
բազմամեղիս:

13

Արքա՛ երկնավոր,
տուր ինձ արքայությունը քո,
որ խոստացար սիրելիներիդ
և զորացրու սիրտս, որ մեղքերն ատեմ
և սիրեմ լոկ քեզ,
անեմ կամքը քո,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝
բազմամեղիս:

14

Խնամո՛ղ արարածների,
խաչիդ նշանով պաշտպանի՛ր հոգին և մարմինը իմ
մեղքերի պատրանքից,
դևերի փորձությունից,
մարդկանցից անիրավ
և բոլոր վտանգներից հոգու և մարմնի,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝
բազմամեղիս:

15

Ամենի պահապան Քրիստո՛ս,
աչքը քո հովանի թող լինի ինձ վրա
գիշեր և ցերեկ,
տանը նստած և
ճամփա գնալիս,
քնած և արթուն,
որպեսզի երբեք ես չխոտորվեմ,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝
բազմամեղիս:

16

Աստվա՛ծ իմ, որ բացում ես ձեռքդ
և լցնում բոլոր արարածներին քո ողորմությամբ
հանձնում եմ քեզ անձն իմ.
դո՛ւ հոգա, գոհացրու
պետքերն իմ հոգու
և իմ մարմնի.
այսուհետև մինչև հավիտյան,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝
բազմամեղիս:

17

Մոլորվածներին դու դարձի՛ բերող,
դարձի բեր և ինձ իմ չար բարքերից
բարի բարքերի,
բևեռի՛ր իմ հոգում
սոսկալի օրը մահվան,
երկյուղը գեհենի
և սերը քո արքայության,
որ դառնամ մեղքերից և արդար գործեմ,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝
բազմամեղիս:

18

Աղբյո՛ւր անմահության,
բխեցրո՛ւ զղջման արցունքներն իմ սրտից.
ինչպես պոռնիկի [սրտից բխեցրիր],
որպեսզի լվամ մեղքերն իմ անձի,
նախքան աշխարհից իմ հեռանալը,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝
բազմամեղիս:

19

Պարգևի՛չ ողորմության,
հավատով ուղղափառ
և բարի գործերով
և քո սուրբ մարմնի և արյան հաղորդությամբ
թո՛ւյլ տուր գալ առ քեզ,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝
բազմամեղիս:

20

Բարերար Տե՛ր,
ինձ բարի հրեշտակին հանձնիր,
որ քաղցրությամբ առնի իմ հոգին,
և անվնաս տանի չարքերի միջից,
որ գտնվում են երկնքի ներքո,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝
բազմամեղիս:

21

Ճշմարիտ լույս Քրիստո՛ս,
[ինձ] կանչելու օրն արժանացրո՛ւ հոգիս
ուրախությամբ տեսնել լույսը քո փառքի
և արդարների օթևանի մեջ
հանգչել բարեհույս՝
մինչև քո մեծ գալստյան օրը,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝
բազմամեղիս:

22

Դատավո՛ր արդար,
երբ Հոր փառքով դու գաս դատելու
կենդանիներին և մեռյալներին,
մի՛ արա դու քո ծառայի դատը,
այլ փրկի՛ր դու ինձ մշտակրան հրից,
լսելի՛ արա

ինձ երանավետ կոչն արդարների
երկնային արքայությունդ,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝
բազմամեղիս:

23

Ամենողորմ Տե՛ր,
ողորմի՛ր բոլոր քեզ հավատացողներին՝
մերայիններին և օտարներին,
ծանոթներին և անծանոթներին,
կենդանիներին և մեռյալներին,
թողություն տուր նաև իմ դեմ հանցավոր
թշնամիներիս և ատողներիս,
ե՛տ դարձրու նրանց
իմ դեմ ունեցած չարություններից,
որ արժանանան ողորմությանդ,
և ողորմի՛ր քո արարածներին և ինձ՝
բազմամեղիս:

24

Փառավորյալ Տե՛ր,
ընդունիր ծառայիդ աղաչանքները.
ի բարի՛ն կատարիր խնդրանքները իմ՝
բարեխոսությամբ սուրբ Աստվածածնի,
Հովհաննես Մկրտչի,
և սուրբ Ստեփաննոս Նախավկայի
և սուրբ Գրիգոր մեր Լուսավորչի
և սուրբ առաքյալների և մարգարեների,
վարդապետների և մարտիրոսների
և սուրբ հայրապետների և ճգնավորների
և սուրբ կույսերի
և քո երկնային նաև երկրային
բոլոր սրբերի:
Եվ քեզ փա՛ռք և երկրպագությո՛ւն
անբաժանելի Սուրբ Երրորդությանդ,
հավիտյանս հավիտենից, ամեն:

Աշխարհաբարի վերածեց
ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆՅԱՆԸ